

XVIII—XIX ԴԱՐԵՐԻ ԳՐԱԲԱՐԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայոց լեզվի պատմության ուշագրավ երևույթներից մեկն այն է, որ նրա հին գրական տարրերակը գործառնել է V դարի սկզբներից մինչև XX դարի սկզբները, Այդ ընթացքում հին գրական հայերենը, բնականաբար, կրել է որոշակի փոփոխություններ: Դրանք երևան են եկել արտալեզվական հանգամանքների բերումով, տեղի են ունեցել լեզվի համակարգի ներքին կազմավորումների շնորհիվ:

Մինչև այժմ չունենք հին գրական հայերենի պատմության ամբողջական ուսումնասիրություն, որտեղ ներկայացված լինե՞ր գրաբարի պատմությունը սկզբից մինչև իր վախճանը: Նման ուսումնասիրության ստեղծումը արդի սովետա՛յ լեզվաբանության կարևորագույն խնդիրներից մեկն է: Այն իրագործելը միանգամայն հնարավոր է, որովհետև հրապարակի վրա են տարբեր կողմերով գրան նպաստող բազմաթիվ հետազոտություններ՝ անկախ իրենց բնույթից և ընդհարումից: Ավելին, տրված է գրաբարի պատմության լիարժեք շրջանաբաժանումը, որը, մեր կա՛ռծիքով, որոշակի դեր կարող է խաղալ այդ ուղղությամբ:

Ըստ հիշյալ շրջանաբաժանման, XV—XIX դդ. գրաբարը գործառնում է «աշխարհաբար»-ը: շրջանում: Այն աչքի է ընկնում ոչ միայն բառապաշարի, այլև թերականական կառուցվածքի մի շարք առանձնահատկություններով:

XV—XIX դդ. գրաբարի ձևաբանական առանձնահատկությունները ընդհանուր առմամբ առաջանում են մի կողմից գրաբարի ինքնուրույն, ոչ բնականոն զարգացման, մյուս կողմից՝ միջին գրական հայերենի, ժամանակի խոսակցական տարրերակների և գրական աշխարհաբարի հետ նրա ունեցած հին ու նոր շփումների, ինչպես նաև XIV դ. իր հիմքերն ունեցող և մինչև XVI դ. 80-ական թթ. դեռևս շարունակաբար գործառնող լատինաբան հայերենի ազդեցության հետևանքով:

Հայերենի զարգացման նոր շրջանում իբրև գրավոր լեզու գործածվող գրաբարը ենթադրում է ավելի քիչ թվով փոփոխություններ, որովհետև այս դեպքում գործ ունենք մի այնպիսի լեզվական տարրերակի հետ, որտեղ հասկանալի պատճառներով որոշակի դեր ունեն ավանդույթը՝ կանոնապահությունը: Ձևաբանական առանձնահատկությունները գրաբար երկրորդ, բնականաբար, ևրևան են գալիս տարբեր շփերով: Փոփոխություններից գրեթե զերծ են այն ևրևները, որոնց հեղինակներն ավելի հետամուտ են հին գրական հայերենի ավանդույթին: Ինչ ընդհակառակը՝ դրանք մեծ թիվ են կազմում այդ ավանդույթին առհասարակ ոչ լիովին և լիարժեք տիրապետող, առավել ևս՝ չհետևող հեղինակների երկերում:

Մեզ հետաքրքրող շրջանի գրաբարի ձևաբանական առանձնահատկությունները ծաղում էն ևրե՛ք կարգի աղբյուրներից: Դրանք բնութագրվում են իբրև հին գրական հայերենից ու XVI—XVII դդ. գրաբարից եկող ձևերի ժառանգում, եղածին զուգահեռ ձևերի առաջացում և բոլորովին նոր տարրերությունների զոյացում:

Ստորև անդրադառնում ենք անվանական և բայական ձևերի փոփոխություններով պայմանավորված առանձնահատկություններին: Անվանական ձևերի փոփոխությունները վերաբերում են զոյականին, մասամբ՝ ածականին, հասկանալի վերապահությամբ՝ դերանվանը, ըստ որում նկատի ենք առնում հոլովման տիպերի, հոլովի և թվի քերականական կարգերի, համեմատության աստիճանների կազմությունը: Բայական ձևերի փոփոխությունները երևան են գալիս դերբայական ձևերի, խոնարհման տիպերի, եղանակային և ժամանակային ձևերի կազմություններում:

1 Տե՛ս է. Աղ ա յ ա ն. Գրաբարի պատմության շրջանաբաժանումը.— «Թանգեր Երևանի համալսարանի», 1974, № 2, էջ 58—81:

1. Գոյականի հոլովման տիպերի առանձնահատկությունները նկատելի են հատկապես հետևյալ դեպքերում:

ա) Տեգի է ունենում ի հոլովման տարածում և գրկի բնդհանրացում: Գիտենք, որ այդ հոլովումը բավական տարածված էր հին հայերենում, ավելի է աշխուժանում միջին գրական հայերենում, իսկ նոր շրջանում այն դառնում է առավել գերակշռող: Դա հաստատվում է նաև XVIII—XIX դդ. գրարարի փաստերով: Այսպես, նորակազմ, խոսակցական և նոր փոխառություն դիտվող բաղադրյալ բառեր ընդգրկում են ոչ այլ կերպ, քան ի հոլովմամբ: Օրինակ՝ «յորում ամբողջ զիդաւսնին բաղմանայ» (ՄԹՃՀ, 22). «սմուտ ի տուն փողեղագործի ուրումն Մինասայ» (ԲՊ, 2). «ստանձնել զպաշտօն խորհրդականի Արթուրի դրամանցի» (ՄՄՑ, 9). «Ջանհնքն ըրանրայ մարդն նանտնի (տէկան տեսակ)» (Վ. Հ.) նմանեցուցանեն» (ՄԹՃՀ, 65). «և ծախուցել զվեր ծանրագունեզ ասնջանսն՝ սրբուհւոյն Պետրիքայի» (ԲՊ, 74). «Ի կշիռ Կրիտոփայտի ստիկստի առաւել ծանրակշիռ է փոքրիկ ինչ առաքինութիւն» (ԲԻԲ, 4) և այլն:

Այսպես նաև նախկինում կիրառված ի-ա, ւ (կամ ներքին ընթացն ա) հոլովման որոշ բառեր թերթում են տարբեր ի հոլովմամբ: Օրինակ՝ «զարդարեալ հոյակապ գմբէթիւ և բարձրագլուխ հանդիսացել» (ՆԳՀ, 17). «բոլոր յաշխարհն լերամբ, բլուր, անտառներ... գաւառաւ, դաշտաւ, գեղերէս, տաւրի» (ՈՓ, 106). «սկսաւ Բափօսի գնալ ի գերեզման» (ԲՊ, 48) և այլն:

բ) Նկատվում է որոշակի շեղում դեպի ի-ա հոլովումը: Այսպես, ունենք այս տիպին հարող գոյականներ, որոնք հնում պատկանելիս են եղել տարբեր հոլովումների: Այսպիսի միտում ունեն նաև որոշ նորակազմ գոյականներ: Օրինակ՝ «բոլոր յաշխարհն լերամբ, բլուր» (ՈՓ, 106). «Ի լաւ՝ դնոսա բնդէմ լորից դարբասաց հրապարակին» (ՄԹՊՊ, 253). «փոքր մի խոտորեալ արուարս առ դարբասուն նգրի» (ՄԹՃՀ, 43). «բոլոր յաշխարհն լերամբ, բլուր, անտառներ, ծովաւ» (ՈՓ, 106) և այլն:

գ) Նոր շրջանի գրարարում միշտ էլ, որ նորակազմ բառերը հոլովվում են մեկընդմիջ միևնույն հոլովմամբ: Այսպես, ունենք քնդանօր նորակազմություն, որը լինելով ի. ի-ա հոլովումներով, Օրինակ՝ «առանց քնդանօրից ստիկաց զնոսա տալ զամբոցն» (ՆԳՀ, 21). «առն ունելով փութանակի գալստեան ահալ քնդանօրից իւրոց» (Ն. տ. 20). «օգնական լինէին է բուռն է լորք ի շանթառք գործեաց քնդանօրաց» (ՄԹՊՊ, 180). «և սպարապետ նորա զօրք և քնդանօրք էկելալ զկիսով գիշերոյ» (Ն. տ., 237) և այլն:

դ) Գոյականի հոլովման համակարգում երևան է գալիս շեղում դեպի ո հոլովումը: Օրինակ՝ «ի լգոյէ դունոյն, լգոյանայ գունաւորեալն, ի լգոյոյ ծնողին, լգոյանայ զաւակն, ի լգոյէ աւառն, լգոյանայ ծառայն» (ՎՊՊ, 154). «էր այր երկայնահասակ և բարակ, լեղոտ երեսով, բարձր ուրուր և դեղնաթիւ ալօք» (ՄԹՃՀ, 5). «հրաման ետ իւր իշխանոյ մին. ընդ իւրն առնել լորս զինուորին» (ԲԱՊ, 33), «և ամենայն իւրովք կզերկնստով» (ԲՊ, 48). «և իւրն մերձեան, ոմբով ատրճանակաց քանթահար ի սիրտ նորա՝ առնուն զվերարկու նորա և զգլխարկն» (ՄԹՊՊ, 250) և այլն:

ե) Սակավ դեպքերում նկատվում է անցում դեպի ու հոլովումը: Օրինակ՝ «Որպէս զի տեղի դտեալ ստորերկրեայ գոլորշեաց ի վեր ելցեն ընդ փոքում կամ ընդ միջոցս նոցա» (ՄԹՃՀ, 39). «է ի Տայքու առ արևն մինչև յաշխարհն մեր Աղուանից» (ՈՓ, 105) և այլն:

զ) Հին գրական հայերենի շրջանում անկանոն հոլովման պատկանող մի քանի գոյականներ նոր շրջանի գրարարում ձևափոխվում են, այսպես կոչված՝ «կանոնավորվում»: Այդ տեղի է ունենում խոսակցական տարբերակից եկող ներթափանցումների ձևով: Օրինակ՝ «Մինչև կոչել անուն գեղջին Ակեղդամայ անուանէին ըստ բարբառոյ հերբայական, ըստ մեզ այս ինքն է գեղջ արեան» (ԿՈԲ, 6). «Պան... աստուած գեղջից և գտիլ հովուական սրնգի» (էՀԱԴ, 61. տե՛ս նաև՝ ԱԸԾ, 41). «ամենայն կարգ զինուորութեան, դպրութեան, գծագրութեան և ամենայն կառավարութեան ի տանէն հայոց և ի աւանտեւացէ ելցէ» (ՈՓ, 114) և այլն:

է) Բացի սովորական բառերից հաճախ մի շարք տեղանուններ, անձնանուններ, ազգ նշանակող բառեր կիրառվում են զուգահեռ հոլովմամբ: Դա ամենից առաջ բացատրվում է այս կամ

2 Տե՛ս Վ. Աճառյան. Լիակատար բերականություն հայոց լեզվի. հ. 3, Երևան, 1957, էջ 446—458; Վ. Ս. Հովսեփյան. Հոլովում.—Անարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Երևան, 1975, էջ 16—17:

3 Հմմտ. Տայք բառը Բուզանդը կիրառում է թեթև ձևով 3 անգամ, Խորենացին՝ 2, Ծղիշեն՝ 2, Փարպեցին՝ 8, իսկ Ագաթանգեղոսը չունի:

այն բառի դիպվածային գործածությամբ, այնուհետև՝ հեղինակի կամայական մոտեցմամբ: Օրինակ՝ «Ձի լինիցիս իշխանուհի Ազիթանիոյ» (ԹԴՄ, 51—52), «պատուհացաւ մեծապէս ի բոլոր Ազիթանիոյ» (Ն. տ., 54), «տեսանի պայծառապէս ներ գերհոշակ տանն Անուսրիայ» (ԹՊ, 374), «եղև նախկին գլուխ և հիմն երջանկադուհեղի կայսրութեանն Ասուրաբի» (Ն. տ.)⁴, «ճանձնեցան զօրապետին Կրասովսկեայ և արհի եպիսկոպոսին Ներսիսի» (ՄՊԿ, 111), այլև՝ Կրասովսկեայ (Ն. տ.), «եկեալ յառաջնորդութենէն Բասենոյ Հնձուց վանաց Հասանդաւու, առ մեօր Հասանդաւայի, և միարանեալ էր անդէն» (ԱՄՊՂ, 43—44), Այսպես նաև՝ Զուլայոյ (ՅՊՆՁ, 46), Զուլայոյ (Ն. տ., 38, 276), Թէլամաֆի (ՅՊՔ, 12), Տելեմաֆայ (ՅԱՏ, I, 34), Տարկիեկայ (ԼԻԿ, 29), Տարկիեկո (ՂԶԿ, 79), ինկիլգուց (ԹՊ, 476), ինկիլգու (Ն. տ., 478) և այլն:

ը) Գոյականների հոլովման մեջ տեղ են գտնում այլ կարգի շեղումներ, որոնք ունեն մասնավոր բնույթ և վերաբերում են հիմնականում առանձին գեղերի: Օրինակ՝ «Վաճառականը զոգոց (փխ. ի զոգոց—Վ. Հ.) կողպատին և մեք ի սատանայէ կողպատիմք» (ԳԱԼ, 43), «Թշնամիէ (փխ. ի քշնամի—Վ. Հ.) անհաղթելի լուակացք են քարանձախի ճգնութեամբ» (Ն. տ., 181), «Ժան գմեղէն աւելի մեծագոյն շար ոչ գոյ» (ՍԳՓՎ, 138), «Երեսրետց զվաճէ մի» (ԹԴՄ, 71), «Ի վաճէն պայծառ ձորոյ» (ԹՊ, 64)⁵, «Եղև Մաղրասում օգոստոսի մասոյ» (ՈՓ, 6) և այլն:

2. Առանձին հոլովների հետ կապված փոփոխություններից անհրաժեշտ ենք համարում անգրագանալ հետևյալներին:

ա) Ուղղականում ի ձայնավորով վերջացող բառերի թեք հոլովներում ի> և նշվում փոխություններով առաջացած և-ը երբեմն ընկնում է: Դա բավական վաղուց հայտնի երևույթ է և հիմնականում բաղադրվում է խոսակցական հայերենի ազդեցությամբ, այլ կերպ ասած՝ հայերենի խոսակցական տարբերակի ձևերը այս շրջանի դրաբարի համակարգ են ներթափանցում կամ ինքնաբերաբար, կամ որոշակի հանգամանքների բերումով: Այս կետում դրաբարը և խոսակցական հայերենը, իբրև տվյալ շրջանում գործածող լեզվական տարբերակներ, գտնվում են սերտ շփման և փոխադարձ հարստացման պայմաններում: Օրինակ՝ «Երգեմք ձայնի յաւէժական Նկեղեզոյ հաստատութեան» (ԳԱԼ, 155), «և ի այգոյ (փխ. յայգոյ—Վ. Հ.) պտղէ իմէ (ՈՓ, 3), օգոր ասելոց եմք զորպիսութիւն սոցին յիւրում տեղոն» (ՁԴՅ, 69) և այլն:

բ) Ժամանակի խոսակցական տարբերակի ազդեցությամբ որոշակի փոփոխություն է տեղի ունենում նաև, ինչպես նշեցինք վերևում, հոլովման մեջ տեղի ունեցած շեղումներին անդրադառնալիս, գոյականների սեռականում, հայցականում և ներգոյականում: Օրինակ՝ «և միամօր զորդի: յարուցեր, վասն առտաստանաց քվերց և մարց» (ԳԱԼ, 130), «Որք առանձին առանձին տիրապետէին պայազատարար՝ շէնս, զեօղս, քաղաքս և զուեղս իսկ զօրաց ընդ ձևումն ունելով» (ՄՄՅ, 1), «արար այնքան շարս, զի ոչ երբէք դադարիցին ի առնելոյ զշար ամենից մարդկանց» (ՍԳՓՎ, 177) և այլն:

գ) Լատինաբան ազդեցությամբ միառժամանակ շարունակվում է ներգոյականի կազմութեանը ու մասնիկով, երբեմն եմք, մալ, եմք մասնիկ-նախածանցներով: Օրինակ՝ «ճառագայթ. բոստ այնմ, որ է ընծայրում» (ԱՄՂԱ, 88), «ըն յսկզբան աշխարհիս պատժեաց զհրեշտակս գահավիժելով զնոսա ի բարձրութենէ» (ՁԵՌ. 6922, 91), «Ե՛ս սոցանէ յառաջագային այլ ամենայն գոյն»՝ բոստ որում տեսանի ըն հետևեալ քաջութոյս» (ՎՔԻ, 23), «զի կոչեաց զՈւրիա՝ Եմք պատրուակի կամելոյ ի նմանէ առնուլ զհաւատութիւն» (ԱԿՅԱ, 46), «զմալ մտածումն իբր յարալեզ ցոյց տաս նմա թղթոյն զդէզ» (ԳՄՏ, 19), «եւ ստանայցես եմք ճոզոյ զայն մարդութիւն» (ՁԵՌ. 6922, 76—77), «ներ ձախորդութեան բախտին, եմք ճիւղնորութեան, եմք-սառնապանաց և հալածանաց և եմք այլոց պատահմանց շարեաց լինին նոցա նախապատրաստ Բարեխօս» (ԹՊ, 15) և այլն:

դ) Ձևին, բացառիկ դեպքում լատինաբան ըն մասնիկը գործածվում է բացառական հոլովով դրված հոյականի հետ, որը բավական տարօրինակ է, որովհետև այդ ըն մասնիկը լատին-

⁴ Այստեղյան գտնում է, որ իս-ով վերջացող հատուկ անուններն ինչ-ով հոլովելն «ընտիր գործարին» հատուկ չէ: Տե՛ս Վրթանիսի Զալրիսեան Քերականութիւն հայկազեան լեզուի. Վիէն-նա, 1885, էջ 194:

⁵ Նման շեղումներ, ինչ խոսք, բավական հին է՝ իբրև առհասարակ խոսակցականի ազդեցության հետևանք: Հմտ. «Ի մէջք օրիորդին ալանաց» (Խորենացի), «Ի ձայնաբերութեան ամենայն» (Բուզանդ): Տե՛ս Ա. Բ ա գ ր ա տ ու ն ի. Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելու. Վենետիկ, 1852, էջ 47—49:

նարան մտածողությամբ կոչված է եղել արտահայտելու «տեղ, մի բանի մեջ» իմաստը՝ Օրինակ՝ «աշխարհիս հաց և միրգ լինի և զամենայն ըն կերակրէ և մարգս բազում» (ԳԱԼ, 4)։

3. Մեզ հետաքրքրող շրջանի գրաբարի ձևաբանական հետաքրքրական առանձնահատկություններից մեկն էլ գոյականի հոգնակի թվի կազմությունն է։ Այո գեպրում են իր մասն ունի ժամանակի խոսակցական տարրերակր։ Դրանից բացի նկատելի են միջին գրական հայերենի, ինչպես նաև լատինարան գրաբարի ներթափանցումները։ Ուստի և նման առանձնահատկություններից այստեղ կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները։

ա) Հոգնակի Գ-ի փոխարեն -անի, -աբ, -ուեմ մասնիկների գործածությունը։ Օրինակ՝ «քանզի ազգասեր ծնողանի ռ իրեր թոյլ ետուն այլազգի աղանեհաց և ծառայից հեղույ ի մատուղ միտս նոցա» (ԹՃԴ, 31. այլև՝ ն. տ., 38), «Տակալին դպրոցի հասուն լեն հասականին» (ն. տ., 31), «երկու և Լթ վտականի Լլանեն ի նմանէ» (ՄԹՃԶ, 34), «Զի առաջին մարգարէն և առաքալքն, հայրապետաբն և մարդասիրաբն, ճգնաւորն...» (ՍԳԺ, 12), «Կարեն առաջադրել նորին և այսոքիկ վանկլուն Լոտառք» (ՍԳՔՎ, 28) և այլն։

բ) Դրաբար բնագրերից կարելի է առանձնացնել մի խումբ, որտեղ բավական զգալի է հոգնակի կազմության այն միտումը, որի դեպքում իբրև արտահայտության պլանի ցուցիչներ հանդես են դալիս -եռ, -ենք մասնիկները։ Այս երևույթը բացատրվում է ոչ միայն միջին գրական հայերենից Եկող ավանդույթի պահպանումով, այլև ժամանակի խոսակցական տարրերակի և ձևավորվող գրական աշխարհագրարի ազդեցությամբ։ Օրինակ՝ «Մանուկն լայոտ լինի աշերեն և մարդն միշտ լա վասն մեղաց» (ԳԱԼ, 47), «Եւ երբեմնապէս՝ գտնենք ի տար շուր գնել, որով ի վայր միջից արևան լիութիւնն» (ՊՋԲ, 62), «Յիշատակը ալանց և գարուց որպէս բնկորը ծովակուր եակենեռոյ» (ԱԸԵ, 9), «Ենոցին բանեւր յարմար բանի և քան զբոյն ախորժնի» (ԳՄՏ, 3), «զպաժառ օրեք դարձոյց յօրեք խաւարլըտին» (ԳԵ, 109) և այլն։

գ) Լատինարան ազդեցությամբ նկատվում է անեղական գոյականների կիրառությունն եղականարար, և բնդհականակն⁷։ Օրինակ՝ «և խոստովանի, թէ յոյժ մեծ իցէ ողորմելի կեանն իւր» (ԶԼԵ. 6922, 20), «Աւ ի՞նչ իցէ այս հանդերձուն» (ԳԵ, 182), «Սակաւ ինչ յառաջ ոչ էր նմա կերպարան, և ոչ վայելչութիւն, այլ կերպարան մահու և ի կետի յարութեան» (ՅԿԵԶ, 82), «Եթէ կարիցէր և յայնժամ ոչ է փոքրագոյն մեղադրան» (ԹԱԽ, 20), «սև սուրբ մարդիք ի ձեռն շնորհաց շաղկապեցեալն ընդ իս» (ՅԿԵԶ, 44—45) և այլն։

4. Ածականը համեմատաբար քիչ է ենթարկվում ձևաբանական փոփոխությունների։ Դա առհասարակ պատճառաբանվում է նրա խոսքիմասային առանձնահատկությամբ, եւ վաղ դեպքում՝ փոփոխությունների միակերպությամբ և անհամաչափությամբ։ XV—XIX դդ. գրաբարի համակարգում այդ փոփոխությունները ի հայտ են գալիս ածականի համեմատության աստիճանների կազմության (այլ կերպ՝ աստիճանակազմության) դեպքում։

Ածականի համեմատության աստիճանների կազմության դեպքում բավական մեծ է լատինարան ազդեցությունը։ XVIII դարում շարունակվում է այն խորթությունը, որ ածականի բաղդատական աստիճանը պարտադիր կերպով կազմվում է -գոյն, իսկ գերադրականը՝ -գունեղ մասնիկներով։ Ի դեպ նշենք, որ այս -գունեղ մասնիկն այլ բան չէ, քան -գոյն մասնիկից զուրացած նոր մասնիկ՝ -եղ ածանցի օգնությամբ։ Ըստ այդմ ստացվում էր ածականի համեմատության աստիճանների կազմության հետևյալ կաղապարը՝ մեծ-մեծագոյն-մեծագունեղ, ծանր-ծանրագոյն-ծանրագունեղ, բարի-բարեգոյն-բարեգունեղ և այլն։ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ նման կանոնարկումը գրված չէր նույնիսկ լատիններենի համակարգում⁸։ Ուրեմն պետք է հետևություն անել, որ լատինարանությանը հետամուտ երևույթը մեղանում հասցված է որաչակի ծայրահեղության։ Օրինակ՝ «նա և ոչ տարորոշեաց ի մէջ բաբայ և բարեգունի, զի հնազանդն միշտ բարեգունեղ ենթադատէ նաև զկարծիքական բարին, որ հրամայի» (ԱՄԴԶ, 23—24), «զայնա ի աղբատագունեղ և ի գոհհիկ տուն հոգւոյ քո» (ՍԳՔՎ, 208) և այլն։

5. Որոշակի փոփոխության են ենթարկվում նաև դերանունները։ Դրանք մի կողմից շարունակություն են հին գրական հայերենի, այլև միջին գրական հայերենի շրջանում գործառնող գրաբարի ներսում նկատվող տարբերությունների, մյուս կողմից՝ ներթափանցում են ժամա-

6 Հմմտ. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության. հ. Բ; էջ 12։

7 Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Վ. Համբարձումյան. Գրաբարի լատինափոխ նորամուծությունների հաղթահարումը XVIII դարում.— ԶՄՄԶ ԴԱ. «Լրաբեր հաս. գիտ.», 1982, № 8, էջ 63—72։

8 Հմմտ. А. Э. у. Историческая морфология латинского языка. М., 1950.

նակի գրական աշխարհարարից՝ կամ վերջինիս խոսակցական զանազան տարբերակներից, որոշ դեպքերում՝ արդյունք են լատինաբան ազդեցության:

ա) Գրարարի նախորդ փուլերում փոքրիշատե հանդիպած և ժամանակի դրական աշխարհարարում իր հիմքերն ունեցող փոփոխություններից են հետևյալները. «Իսկ Եւայ լայր և աղալէր զնա և ասլը կեր և մի որոշել զիս ի քեզանէ» (փխ. ի քէն, ՍԳԺ, 5—6), «որպէս զի նոֆով (փխ. նոֆով) զքեզ ճանաչեալ սիրիցէի» (ԳՄԱ, 14), «այլ յայդէն (փխ. յայդմ, յայդմանէ) ի քեզ խորտակեսցին ալիք քո» (ՅԱ, 3), «եւ տպարկեցեալ առ օդուտ ամենից շանացողութեամբ նոյնոյ» (փխ. նոյն. նոյնում, ԹԱԽ, 1), «որ ի նոյնում (փխ. ի նմին) ժամու ասացէ» (ԹԽ, 55), «սիրել զընկերն որպէս զիրիքն» (փխ. զիրսն), «այսինքն զբարեկամն և զքշնամին» (ԱՄԴՂ, 8), «Ձեռնոյն (փխ. ձեռն) գերազանցութիւն վեհազնեայ իշխան» (ՅԼՅ, 39) և այլն:

բ) լատինաբան ազդեցության հետևանք պիտի համարել այն երևույթը, որ դերանունների ներգոյականում, ինչպես գոյականների դեպքում էր, զործածվում է ըն մասնիկի և տարբերակը (ձայնավորով սկզբնական սկզբում), ինչպես նաև՝ ենթ, ներ մասնիկ-նախածանցները: Օրինակ՝ «ցուցանեն զիւս պրակացն, նոյնում է բանն» (ՄՍԼ, 514), «որք պարունակին նայսմիկ րոլորդ համառօտի աստուածաբանականի ճշմարտութեան» (ԱՄՂԱ, 497), «և ոչ զմտաւ ածող իմում զգերանն» (ԹԱԽ, 131), «ենթ որոյ ի միում վայրկենի ուսանիցէին զգաղտնիս» (ՅԿԽԶ, 29), «ևա որ խնդաց ներ ինքեան» (ԹԴՄ, 13) և այլն:

6. XVIII—XIX դդ. գրարարի համակարգում բայական ձևերի փոփոխությունները համեմատաբար հասնում են մեծ չափերի: Դրանք նույնպես արդյունք են հին գրական հայերենի հետագա գործառնության ընթացքում տեղի ունեցած ձևաբանական տեղաշարժերի: Այդ փոփոխությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ գրարարի նախորդ փուլերից ավանդաբար եկող շեղումների, ժամանակի գրական աշխարհարարի և խոսակցական տարբերակից կատարվող ներմուծումների, օտար՝ լատինաբան ազդեցությամբ պայմանավորված խորթությունների արտացոլումների: Վերջիններս ընդհանուր առմամբ բնական, իսկ որոշ դեպքերում լատինաբանության արդյունք հանդիսացող արհեստական ներմուծումներ են:

Բայական ձևերի փոփոխությունները նկատելի են գրեթե ողջ համակարգում. սակայն ցայտուն կերպով երևան են գալիս դերբայների, բայի խոնարհման տիպերի և եղանակային ու ժամանակային ձևերի կազմության մեջ:

ա) Անորոշ դերբայը համեմատաբար քիչ է ձևավորվում: Փաստերը ցույց են տալիս, որ —ել. —ալ մասնիկները ձևք են բերում լայն կիրառություն, քան մյուսները: Նկատելի է, որ նորակազմ բայերը մեծ մասամբ բաղադրվում են այդ մասնիկներով: Օրինակ՝ «ոչ պարտին վանանալ և անջատի» (ՍԳՔՎ, 33), «յործամ յունկնդրաց մերոց զիր ինչ անհաւանցուցանել և տարահասոցել» (ԽԷՃ, 104), «պայմանաբանել, յնդիոց անտի պայմանակալ էակաց կամ ի ներգործութեանց» (ՄՍՂԶ, 122) և այլն:

բ) Հետաքրքիր է այն երևույթը, որ լատինաբան բնագրերում նկատելիորեն —իլ մասնիկն ամբողջովին հատկացվում է մյուս խոնարհման բայերի կրավորական սեռի իմաստի արտահայտմանը: Տիպաբանական այս հատկանիշը իր ակունքներն ունի հին գրական հայերենում, սակայն այդպիսին է դառնում հատկապես լատինաբան հայերենի համակարգում: Օրինակ՝ «Որչափ ինչ բառնի յառաքինութենէ, այնչափ ինչ բառնի յերջանկութենէ» (ԹԻԲ, 7), «զի որովհետև ստացանին սեպական զօրութեամբ» (Ն. տ., 16), «Որք պարտին առնանիլ (փխ. առնուլ) առ մերձատրսն» (ԹԴՄ, 14) և այլն:

գ) Ապառնի դերբայի —ոց և —լի մասնիկներով կազմվող ձևերն այս շրջանի գրաբարում, հատկապես լատինաբան բնագրերում, խստագույնս գտնվում են լրացական բաղադրան հարաբերության մեջ՝ կապված բայասեռի արտահայտության պլանի հետ: Օրինակ՝ «Ուր ից զեանդիլոց» (ԹՊ, 371), «Զորս կրեւոց էին ի դժոխս» (ԱԿՅԱ 41), «Որ է մեղք ընդդէմ հոգւոյն սրբոյ, որ է անբողանելի» (ԹԱԽ, 27), «Ոչ են մեզ ձեացուցանելի մարտք և առաջադրելի պատերազմունք ընդ բացակայից և ընդ կարի տարակարելոց ընամեաց, այլ ընդ ընտանի թրշնամոյն հանապազ պատերազմելի» (ՅՊԱ, 172) և այլն:

դ) Անցյալ դերբայի ձևերը ներկայացնում են երկու կարգի առանձնահատկություն: Լատինաբան բնագրերում դերբայի ցուական տարբերակը միտումնավոր կերպով ծառայեցվում է

⁹ Հմմտ. Ա. Ա. Աբրահամյան. Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը. Երևան, 1953, էջ 130, 168—172:

կրավորական սեռի իմաստի արտահայտմանը՝ Օրինակ՝ «նորում իմանի որդին առաջնեցեալ» (ԱՄՀԱ, 23), «իբրև դիտաց հայրն զփախուստն դստերն, առժամայն չիառուցեցեալ բաղձութեամբ զինուորաց, հետեցեալ զինի նորա» (ԹԴՄ, 68), «եւ զի բազմիցս քալաւ ձեռքեցեալ յինկէին» (ՍԼՏ, 514), «եւ նարդենիս ի լոյս անեցեալ և սրբազրեցեալ, ըստ հնոց օրինակաց» (ԱՄՀԱ, 1) և այլն:

Մյուս առանձնահատկությունն այն է, որ, ճիշտ է, սակավ դեպքերում, անցյալ դերբայը կիրառվում է օժանդակ բայի հետ կից դրությամբ՝ օրինակ՝ «Ջայն արդարն ուսուցանէ ի մեռանիւն, զոր ուսուցեալէր ի կենդանութեան» (ՅՊՍ, 5), «Ընդ որում ուտել, ննջել, խօսակցիլ սովորեալիցէր» (Ն. տ., 171) և այլն:

Ը) Հազվագեղ զործածվում է հարակատար դերբայի ձևը՝ բաղադրված դերբայակազմ — անմասնիկ օգնություն, որն անշուշտ հայերենի այլ տարրերակներից եկող ներթափանցում պիտի դիտել: Օրինակ՝ «եւ էտես ի վերայ նորա զտէրն ի խաչին արինաթաթախ և բոլորովիմբ վիտաւաւ» (ԹԴՄ, 436), «Արդ ևթէ հայի ի վեր, տեսանէ զաստուած բարկացած, ևթէ հայի ի վայր, տեսանէ զդժոխս բացեալ» (ԳՄԱ, 26) և այլն:

Զ. Մեզ հետարբերող շրջանի դրարար բնագրերում հանդիպում են բայերի այնպիսի ձևեր, որոնք խոնարհման տիպերի առումով հին գրական հայերենի համեմատությամբ շեղումներ են ցուցնում: Օրինակ՝ «Երբ արինաթաթախ և խաչին արինաթաթախ և բոլորովիմբ վիտաւաւ» (ԹԴՄ, 436), «Արդ ևթէ հայի ի վեր, տեսանէ զաստուած բարկացած, ևթէ հայի ի վայր, տեսանէ զդժոխս բացեալ» (ԳՄԱ, 26) և այլն:

ա) Եւ և ա խոնարհման գերակշռություն ստանալը հիմնավորվում է նաև նրանով, որ այլևայլ խոնարհման մի շարք բայեր վերածվում են հիշյալ խոնարհումներին պատկանող բայերի: Օրինակ՝ «որք յաւելանաւ (փխ. յաւելաւ) ի պահանջութեան իւրեանց» (ՊՄԿԱ, 43), «և մարդս աճաւանաւ» (ԳՄԱ, 24), «որ ըստ սովորութեան երկրին յալէին երկար ժամանակ» (ԹԴՄ, 81) և «Երբ արինաթաթախ և խաչին արինաթաթախ և բոլորովիմբ վիտաւաւ» (ԹԴՄ, 436), «Արդ ևթէ հայի ի վեր, տեսանէ զաստուած բարկացած, ևթէ հայի ի վայր, տեսանէ զդժոխս բացեալ» (ԳՄԱ, 26) և այլն:

բ) Կրավորական սեռի իմաստի ձևային տարբերակման նպատակով լատինարան երկերում, ինչպես քիչ առաջ ասացինք անորոշ դերբայի կրած փոփոխություններին անդրադառնալիս, հատկապես ա և ու խոնարհման բայերն այդ սեռում վերածվում են ի խոնարհման բայերի:

Ց. Այս դարերի գրարարի բայի համակարգի կրած փոփոխությունների հիմնական մասը թերևս վերաբերում է եղանակային և ժամանակային ձևերին: Այս շրջանում գրաբար ժառանգորդարար օգտագործում է հին գրական հայերենի բայական օրինական ու կանոնական ձևերը, վերջիններիս մասնավոր տարբերությունները, ինչպես նաև ներառում է հետագա շրջաններում զործածված լեզվական այլ տարբերակների ինչ-ինչ ձևեր ու կիրառություններ, դիմում է օտարաձուրտ ձևերի շարունակական զործածությանը: Ըստ այդմ էլ կարելի է այն կարծիք կազմել, որ տվյալ դեպքում եղանակային և ժամանակային ձևերի առանձնահատկությունները դրսևորվում են կամ ինքնուրույն ձանապարհով, կամ օտար ազդեցության պայմաններում:

Առաջին դեպքում կարելի է նշել հետևյալը:

ա) Որոշ ձևերում տեղի է ունենում անկատար կերպի ցուցիչ — անսովորական պարզեցում, — ան-ի վերածում — և-ի: Օրինակ՝ «մանուկն զինչ տեսանէ, ուսեմ» (ԳՄԱ, 47):

բ) Անցյալ կատարյալի եզակի երրորդ դեմքում միավանկ հիմքերը կամ հանդես են գալիս առանց վանկարար ձայնավորի, կամ ե, է ձայնավորները կիրառվում են ազատ բաշխման հարաբերությամբ: Օրինակ՝ «և էտես» (փխ. ետես) ի վերայ նոր զտէրն» (ԹԴՄ, 436), «էառ զմի որդն առն աղբատի և էգէն» (ԱԿՑԱ, 79), «Սակաւ առ սակաւ գերիս ցեղս աղից յառաջեքեր, այսինքն նաթրուն, պաղլեղ և սեալեղ» (ՎԲԻ, 48), «առնկա ի ծունկս և երկիւրեպագ խոնարհութեամբ» (ԹԴՄ, 379) և այլն:

գ) Հրամայական եղանակի եզակիում բառավերջի ձայնավորը իրենից հետո ս-եղ-տեղ ունենում է յ կիսաձայնը, որը համարանության հետևանք պիտի դիտել: Օրինակ՝ «Գլ'ած և ողորմած աստուած, քարացեալ եմ, կսկիւղացո՞յ» (ԳՄԱ, 119), «ի ծածուկ տեղոյ թագո՞յ զիս» (ԹԴՄ, 57—58), «Մառո՞յ զձոգիտ, զսիրտդ և զամենայն բարի խորհուրդսդ» (ԳՄԱ, 29) և այլն:

դ) Քիչ չեն նաև այն դեպքերը, երբ սահմանական անկատար անցյալի վերջավորության

1. Ի դժնաս տոկա է Ե: Օրինակ՝ «յորս կատարեին (փխ. կատարեին) խորհուրդք բոս (ՍԵԶ, 73), «յորոց Լւնէին և վերառախեին առ քեզ ձայնք» (Ն. տ.) և այլն:

Ե) XVIII—XIX դդ. գրաբարն ինքնուրույն զարգացման ընթացքում կրում է հղանակային և ժամանակային ձևերի ոչ միայն ձևակազմական, այլև իմաստային փոփոխություններ: Այս իրողությունն առկա էր հին գրական հայերենում, այն հանդես է գալիս նաև նոր պայմաններում: Նման փոփոխությունները համեմատաբար քիչ են, քանի որ չեն ընդգրկում ժամանակային բոլոր ձևերը, այլ նկատելի են հատկապես որոշակի ենթատեքստ ունեցող նախադասությունների իմաստային-գործառական դրսևորումների մեջ: Բավական հատկանշական են ներկյալ ապառնու. իմաստով կիրառվող, գլխավոր և երկրորդական նախադասությունների ժամանակային ներդաշնակութիւնն պահպանումը: Օրինակ՝ «Մահն, որոյ խայթոցն է մեղքն, սրէ զմանդաղ իւր առ ի խլիւ ռթլն կննաց քո, բայց աստուած ոչ քոյլ տայ նմա» (ԱԿՅԱ, 45), «Արդ եթէ հայի ի վեր, տեսանէ զաստուած բարկացած, եթէ հայի ի վայր, տեսանէ զդժոխն բացեալ, եթէ հայի ի յաջ կոյս, տեսանէ զզուհս դիւաց, եթէ հայի ընդ յահակ, տեսանէ զբազմութիւն մեղաց, եթէ հայի հետկոյս, տեսանէ զվայելչութիւն աշխարհիս թողեալ, իսկ եթէ հայի յառաջ կոյս, տեսանէ զյաւիտենական տանջանսն, որք սպասեն ինքեան» (ԳՄԱ, 26), «Իսկ որ մտանէ յանդորր այս ծով, անաշխատ զտցէ զգեղեցիկ մարգարիտն» (ԶԼՈ. 3091, 5ա) և այլն:

Նրկորդը ղեկարգում անդրադառնում ենք հղանակային և ժամանակային ձևերի հետևյալ բուն-առանձնահատկություններին:

ա) Լատինաբան ազդեցության հետևանքով հաճախ բայի պարզ հիմքերին փոխարինելու են գալիս ածանցավոր հիմքերը: Օրինակ՝ «և լնանիմ բոլորովիմ խնդովեամք» (ԹՊ, 416), «զի մեղքն իւրք քողանիցին» (ԹԴՄ, 17), «ի վերա (փխ. յ-ով —վ. չ.) լնանիմ սրբով բաղձանաւ» (Ն. տ., 38), «սպանանելն աղբիւրն այսու պատուիրանաւ» (ՍԳԲՎ, 191) և այլն:

բ) Առաջադրում են կոնկրետ, տվյալ դեպքում միայն և խոնարհման սահմանական հղանակի անցյալ անկատար և ստորադասական հղանակի անցյալ անկատար ժամանակների դեպքում գործածվող հիմքեր: Օրինակ՝ «ի շարաբարդին որքան բազմիցս սխալեին, այնքան աշխատանք մեր առ ուղղագրումն բազմապատկեցեալք լինէին» (ԳՄ, 1), «որք պտնանցեին առ գրումն այնց» (Ն. տ.), «վասն այսորիկ առաքինիքն արիք անուանեին» (Ն. տ.), «զի մի հեղձանիցեին գրեցեալքն» (ԳՄ, 1, 11) և այլն:

գ) Ու խոնարհման բայերը, դարձյալ լատինաբան ազդեցությամբ, սահմանական և ստորադասական կրավորաձև ներկայի ձևերում ունենում են —ան ածանցով հիմքեր: Օրինակ՝ «Որ եթէ աղբիւրն» (փխ. արգելուցու), «մեռանին» (ՍՄԳԺ, 95), «զի մեղքն իւրք քողանիցին» (ԹԴՄ, 17) և այլն:

դ) Ստորադասական հղանակից առանձնացվում է ըզձական հղանակը, որը տվյալ դեպքում արվում է լատինաբանի հետևողությամբ: Հետ որում առաջինը կազմվում է երբ, քե, իսկ երկրորդը երանի քե բառերի միջոցով: Այդ հղանակները լրացվում են նոր ժամանակաձևով՝ անցյալ անկատարով, որոշակի մասնիկների ներմուծումով անկատարի հիմքին: Օրինակ՝ «երէ դու համագործել կամիցէիր աստուածայնոյ շնորհաց» (ՅԿԽԶ, 17), «երէ կարիցէր և յայնժամ էլ է փոքրագոյն մեղագրան» (ԹԱԽ, 20), «զինչ լինիցէր ինձ, երէ մահն տիրիցէր ինձ յայնժամ» (ԳՄԱ, 37), «եսխ քան քե խնդրիցէին զներումն» (ԱՄԴԶ, 102), «Ոհ, երանի քե իցէր այնպիսի բարձր լեռն մի» (ԳՄԱ, 30), «երանի քե վատթարագոյն ոչ իցէին» (ՅՊԱ, 17) և այլն:

9. XVIII—XIX դդ. գրաբարի բայական համակարգում տեղ գտած փոփոխություններից առաջնակարգ նշանակություն ունի նաև բայի բաղադրյալ ժամանակների կազմության, ինչպես նաև պարզ և բաղադրյալ ժամանակների կիրառական հարաբերակցության հարցերի պարզաբանումը: Հայտնի է, որ գրական աշխարհաբարը, ի տարբերություն առհասարակ գրաբարի, աչքի է ընկնում բաղադրյալ ժամանակների և՛ առատությամբ, և՛ կիրառության հաճախականությամբ: Դրանից բացի, գրական աշխարհաբարը տարբերում է բուն և երկրորդական բաղադրյալ ժամանակներ: Նման բազմաձևության մեջ ի՞նչ ներդրում ունի գրաբարն առհասարակ, և նոր շրջանում գործառուղ գրաբարն՝ առանձնապես: Այս հարցի պատասխանն ամենից առաջ պիտի

11 Նշենք, որ —ի (փխ. —ի) վերջավորությունը գտնում ենք, օրինակ, Ստեփաննոս Սյունեցու բերականության մեջ: Տե՛ս Н. А. Д о н ц. Дионисий Фракийский и армянский толкователь. Пг., 1915.

որոնել XVIII—XIX դդ. գործառույթը դրաբարի բայի բաղադրյալ ժամանակների և նրանց՝ պարզ ժամանակների հետ ունեցած առնչությունների մեջ:

Հին դրական հայերենի բայի բաղադրյալ ժամանակներն ըստ էության ներկայացված են դրաբարի բերականություններում, ինչպես նաև դրանց տատմությանը նվիրված ուսումնասիրություններում¹²:

XVIII—XIX դդ. դրաբարի բաղադրյալ ժամանակները տվյալ դեպքում ուղադրության առարկա են, ինչպես նշեցինք, իրենց կազմության բնույթի և կիրառության հաճախականության տեսակետից: Մի դեպքում ներկայացնում ենք դրանցում ձևակազմական ընդհանուր օրինաչափություններից կատարվող շեղումները, մյուս դեպքում անցկացնում ենք պարզ և բաղադրյալ ժամանակների կիրառության հարաբերակցության պատկերը ցույց տվող վիճակագրություն:

ա) Հանդիպում են —եւ և —աւ վերջավորություններով վաղակատար դերբայի և եմ բայի միջոցով կազմված բաղադրյալ ժամանակի կիրառությունները: Նման բաղադրությունը, ինչպես դիտենք, երևան է գալիս միջին դրական հայերենի բայի համակարգում¹³: Հետագայում այն անցնում է դրական աշխարհաբարին՝ իր հիմքերն ունենալով ժամանակի խոսակցական տարբերակում: Տվյալ դեպքում դործ ունենք ժամանակի դրական աշխարհաբարից եկող ազդեցության հետ: Օրինակ՝ «Ըզդառն զայն, որ օգուտ է, դայլ ես աւեր, զքեզ թող ուտէ» (ԳՄՏ, 12), «Է՛ր դու յանձին բում շես դըթար, և առ օգուտըն միշտ փութար» (ն. տ., 14):

բ) Լատինարան ազդեցությամբ պայմանավորված շեղումներն այստեղ կատարվում են նոր բաղադրյալ ժամանակ կերտելու, դերբայի և օժանդակ բայի միջև բերականական լիարժեք կապ ստեղծելու, տվյալ օժանդակ բայով կազմությունը գործառնական առանձնացնելու հիմունքների իրականացման նպատակով:

Այսպես, անցյալ դերբայը բաղադրվում է եմ բայի անցյալ ապառնու ձևերի հետ՝ կազմելու ստորադասական բաղադրյալ ապառնի անցյալ ժամանակաձևը: Օրինակ՝ «Որպես յաւուրն սահուն բո ցանկաս թէ կեցեալաւաւեալ իցէիր» (ԳՄԱ, 28), «Կամ աւարեալ իցէի զայսպիսի մեղս, և թէ կաւացեալ իցէի» (ԹԱՆ, 11), «Քաւատացեալ իցէի զրարիս, եթէ լուեալ իցէի» (ն. տ., 41) և այլն:

Այնուհետև, լատինարան գրաբար տարբերակում բաղադրյալ կազմություն ունեն աներևույթ եղանակի կատարյալ և ապառնի ժամանակները: Դրանք կազմված են անցյալ և ապառնի դերբայներով և զով օժանդակ բայով, այսինքն՝ զով-ը հատկացվում է միայն այդ եղանակի ձևերի կազմությանը: Օրինակ՝ «Որք ի նմին իրի ներփակեցեալ զոն» (ՁԵՈ. 6922, 12), «աւմատալսլի զով ուսուցանիցէր» (ՅՊՍ, 161) և այլն:

գ) Նոր շրջանի գրաբարում բաղադրյալ ժամանակաձևերն առհասարակ քիչ են կիրառվում, քան պարզ ժամանակաձևերը: Դա ունի իր առարկայական պատճառները: Նախ, բաղադրյալ կազմությամբ ձևերը քանակով զիջում են պարզ կազմություններին: Երկրորդ, գրաբարում պարզ կազմություն ունեն այն օժանդակ բայերը, որոնցով խորհրդանշվում է բաղադրյալ ստորոգյալը: Եվ երրորդ, պարզ ժամանակաձևերը կրում են իմաստային որոշակի փոփոխություններ և գործածվում են միմյանց փոխարեն, այսինքն՝ բաղադրյալ ժամանակաձևերը զերծ են նման փոխանցումներից:

Տեսականորեն թվում է, թե դրական աշխարհաբարն այս հարցում պիտի ազդած լիներ գրաբարի վրա: Բայց իրականում այդպես չէ: Գրական աշխարհաբարը ոչ միայն չի ազդում գրաբարի վրա, այլև գրաբարն այս հարցում ևս իրեն միառժամանակ «հեռու է պահում» դրական աշխարհաբարից, այսինքն՝ ձգտում է ավելի ջատ հետևելու իր ավանդույթին, քան վերականգնվելու:

10. Պարզ և բաղադրյալ ժամանակաձևերի կիրառության հարաբերակցությունը ստույգ որոշելու նպատակով դիմում ենք վիճակագրական վերլուծությանը: Այդ նպատակով գրաբար տարբեր բնույթի և զարգացման տարբեր փուլերի պատկանող բնագրերից կատարում ենք հավասարաչափ հատվածների ընտրանք: Ըստ որում՝ եթե տվյալ բնագիրն ավանդված է ձեռագիր և տպագիր վիճակներով, ապա դրանք, իրենց հերթին, համեմատում ենք միմյանց հետ: Մեծ

12 Տե՛ս Ա. Ա. Արա հ ա մ յ ա ն. նշվ. աշխ., էջ 306—358: Ս. Ա. Ն թ ո ս յ ա ն. Խոնարհման համակարգի զարգացման ընթացքը.—Հայոց լեզվի պատմական քերականություն. հ. 2, Երևան, 1975, էջ 220—264, Գ. Թ ո ս ու Ն յ ա ն. Գրաբարի վերլուծական ժամանակները.—ՀՍՍՀ ԳԱ Երաբեր հաս. գիտ., 1984, № 2 էջ 105—112:

13 Հմտ. Ակնարկներ միջին դրական հայերենի պատմության. հ. Ա, Երևան, 1972, էջ 297—406: Հայոց լեզվի պատմական քերականություն. հ. 2, էջ 226—229:

մասամբ իրենց բնագրերի ձևը ենթ համեմատում նաև տարբեր թարգմանությունները: Ընտրել ենք 33 բնագրերի հատվածներ՝ առնված ոչ միայն ինքնին, այլև բնագրային որոշակի տարբերակներով հանդերձ: 14:

Վերլուծությունից պարզվում է հետևյալը:

ա) Առանձնակի բնագրերում պարզ ժամանակաձևերի 588 կիրառության դիմաց կա բաղադրյալ ժամանակների 42 կիրառություն (7, 9 տոկոս), իսկ ձեռագիր և տպագիր տարբերակներում՝ 43-ի դիմաց 4 (10,7 տոկոս), տպագիր տարբերակներում՝ 36-ի դիմաց 5 (7,2 տոկոս), թարգմանական տարբերակներում՝ 302-ի դիմաց 9 (0,33 տոկոս):

բ) Բնագրերի մի մասում ոչ մի բաղադրյալ ժամանակաձև չի կիրառված: Այդպիսի բնագրեր են՝ ԱԸԵ, ԱԿՊ, ԽԱԵ, VIII, ԽԱԵ, X, ԽՁՊՊ, ՄԹԵ, ՅԱԶ, ՈՓ, ՁԵՆ. 2053, ԱԳՓ II, ԱԳՓ, III, ԳԵ, ՌԳ, I, ՌԳ, II, ՂԶԿ, ՀՌԿ, ՆՊՎ, ՎՊՎ, ՊՎԱ, ԲՏՊ և ՖԱՏ, I: Նման մոտեցումը, մեր կարծիքով, ըստ էության պիտի բացատրել չին գրական հայերենին տիպաբանորեն առավել հատկանշական համագրականությանը խստորեն հետևելու հանգամանքով: Դա՝ նախ, ցայտուն կերպով երևան է դալիս թարգմանվող երկի և նրա գրառար թարգմանության տվյալների մեջ, այնուհետև՝ հատկանշական է միևնույն բնագրի տարբեր տպագրությունների համար. հմմտ. ՁԵՆ. 3091-ում՝ 3 անգամ, իսկ ԱԳՓ, III-ում՝ չորս ևստ այդմ պարզվում է, որ չին գրական հայերենին հետևող հեղինակները մեզ չնտաքրքրող հարցում դավանում են խիստ սկզբունքներ, քան այդպիսիները բործադրվում էին նույնիսկ չեքի կողմից: Այս կետում է, որ ասվում է, թե նոր շրջանի գրառարը ավելի ավանդապա՛ է, և ուղղափառ (օրթոդոքս), քան չինը:

գ) Բնագրերի մյուս մասում բաղադրյալ ժամանակների կիրառություններն ունեն հետևյալ նախադասություններ. ԱՄՊԶ-ում 5 անգամ, ԲԲՌ-ում՝ 1, ԳԱՊՌ-ում՝ 1, ԳՏՊ, II-ում՝ 5, ԵՍՄԸ-ում՝ 1, ԹՃԴ-ում՝ 1, ԿԿԶ-ում՝ 3, ԸՀՆՈ-ում՝ 1, ՄՊԿ-ում՝ 9, ՄՁՊԶ, III-ում՝ 5, ԽՄԸՆ-ում՝ 1, ՅԼՅ-ում՝ 1, ՆՀՄ-ում՝ 3, ՍԱՊ-ում՝ 1, ՍԲՈ-ում՝ 1, ՕՈՒՆ-ում՝ 2, ՁԵՆ. 2053-ում՝ 1, ԸԼՆ. 3091-ում՝ 3, ԿԿՈՐ-ում՝ 2, ԳԱ, I-ում՝ 2, ԳԱ, II-ում՝ 1, ՄԴԿ-ում՝ 1, ՄԿԴ-ում՝ 1, ՊՊՎ-ում՝ 1, ՖՊԹ-ում՝ 4, և ՖԱՏ, I-ում՝ 2:

դ) Բաղադրյալ ժամանակները համեմատաբար շատ են գործածվում այն բնագրերում, որոնցում՝ նախ, այնուամենայնիվ զգացվում է գրական աշխարհաբարի բայական համակարգի, և առհասարակ՝ նոր ժամանակների լեզվամտածողության ազդեցությունը. հմմտ. ԱՄՊԶ, ԿԿԶ, ՄՊԿ, ՆՀՄ, ՕՈՒՆ, ՁԵՆ. 3091, ՖՊԹ և այլն, երկրորդ՝ որոշակի տեղ է տրվում հեղինակային նախասիրությանը. հմմտ. ԳՏՊ, II, ՄՁՊՊ, III և այլն:

ե) Վերլուծությունից պարզվում է, որ բաղադրյալ ժամանակաձևերը գերազանցապես կազմվում են ռանցյալ դերբայ-օժանդակ բայն կառույցով, այլ կերպ ասած՝ չեն հանդիպում ռանգառների դերբայ-օժանդակ բայն կառույցով ժամանակաձևեր: Իսկ սա երկրորդաբար նշանակում է, որ առաջին տիպի կառույցը մեզ հետաքրքրող շրջանի գրառարում ձևոր է բերում մեծ կենսականություն, դառնում է գրեթե միահեծան բաղադրյալ ժամանակային կառույցը: Նման կառույցի բացարձակ գերակշռություն ստանալը թերևս նոր ժամանակների լեզվամտածողության արդյունք է:

14 Այդ հատվածներն են՝ ԱԸԵ, էջ 38—39, ԱԿՊ, էջ 98—99, ԱՄՊԶ, էջ 21—24, ԲԲՌ, էջ 306—307, ԳԱՊՌ, էջ 39—40, ԳՏՊ, II, էջ 370, ԵՍԱԸ, էջ 46—47, ԹՃԴ, 9—11, ԽԱԵ, VIII, էջ 314—315, ԽԱԵ, X, էջ 261—262, ԽՁՊՊ, էջ 294—295, ԿԿԶ, էջ 18—19, ԸՀՆՈ, էջ 1—2, ՄԹԵ, էջ 8—9, ՄԿՊ, էջ 68—70, ՄՁՊԶ, III, էջ 364, ՄՍԶԸ, էջ 301—302, ՅԱԶ, էջ 5—6, ՅԼՅ, էջ 3—4, ՆՀՄ, էջ 55—56, ՈՓ, էջ 113—115, ՍԱՊ, էջ 162—163, ՍԲՈ, էջ 278—279, ՕՈՒՆ, էջ 8—9, ձեռագիր և տպագիր տարբերակներ՝ ՁԵՆ. 2053, էջ 3ա, 45բ ~ ԱԳՓ, II, էջ 8, 244—245, ՁԵՆ. 3091, էջ 113բ ~ ԱԳՓ, III, էջ 44—45, տպագիր տարբերակներ՝ ԳԱ, I, էջ II ~ ԳԱ, II, էջ II, ԿՈՐ, էջ 34—36 ~ ԵԴՐՈՐ ատաքելոց (Կ. Պալիս, 1895), էջ 128 (վերջինիս վիճակագրական տվյալները կիրառության հարաբերակցության մեջ են դրվում բացառիկ դեպքերում), թարգմանական տարբերակներ՝ ԳԵ, էջ 109—110 ~ ՌԳ, I, էջ 1 ~ ՌԳ, II, էջ 197 (<RA, էջ 75), ՂԶԿ, էջ 112—114 ~ ՀՌԿ, էջ 33—34 (<LR, էջ 31), ՄԴԿ, էջ 255—256 ~ ՄԿԴ, էջ 143—144, ՆՊՎ, էջ 62, 63—64 ~ ՎՊՎ, էջ 48—49 ~ ՎՊՎ, էջ 60—70, 71 (<BPV, էջ 60, 61—62), ՊՎԱ, էջ 13, 14—15 ~ ԲՏՊ, 3—4 (<EHU, էջ 6—7), ՖՊԹ, էջ 10—12 ~ ՖԱՏ, I, էջ 32—33 ~ ՖԱՏ, II, էջ 12—14 (<FAT, էջ 1):

զ) «Անցյալ դերրայ—օժանդակ րայ» կառույցում իրրև օժանդակ րայ գործածվում է ճնշող մեծամասնությամբ եմ րայը, իսկ լինեմ-ը կիրառվում է ընդամենը 7 անգամ: Այդ կառույցի «անցյալ դերրայ երրորդ դեմքի օժանդակ րայ—սեռական հոլովով անձնական դերանուն» ենթակառույցը կիրառվում է ընդամենը մեկ անգամ (տեսնալ է մեր—ՅԼՅ, էջ 3):

է) Եվ վերջապես, սույն վիճակագրական հաշվումը ցույց է տալիս, որ մեղ հետաքրքրող շրջանի գրադարում բաղադրյալ ժամանակների կիրառությունը կազմում է մոտ 8 տոկոս (ստույգ՝ 7,9 տոկոս):

Վերը շարադրվածից բխում են հետևյալ եզրակացությունները: XVIII—XIX դդ. դրարարի ձևարանական համակարգը ընդհանուր օրինաչափություններից բացի կրում է որոշակի առանձնատկություններ: Զևարանական առանձնահատկությունների հիմքում ընկած են զոյականի, ածականի, դերանվան և րայի քերականական կարգերի արտահայտության պլանում տեղի ունեցած փոփոխությունները: Այդ առանձնահատկությունները գոյանում են հին գրական հայերենի գիտակցարար հետևելու, միջին գրական հայերենին երկրորդարար առնչվելու, ժամանակի խոսակցական տարբերակի և գրական աշխարհարարի հետ ունեցած անկասելի շփումների, ինչպես նաև լատինարան ազդեցության հետևանքով:

ՀԱՄԱՌՈՒՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԳՓ, II—Անտոն Գավրիլ, Փրիսոփայություն, հ. Բ, Վենետիկ, 1750:

ԱԳՓ, III—Անտոն Գավրիլ, Փրիսոփայություն, հ. Գ, Վենետիկ, 1751:

ԱԸԵ—Ընդ Լիզենսա, Ղ. Ա [Լիշան], Վենետիկ, 1874:

ԱԿՑԱ—Աղեքսանդրոս Կրոնաուր, Յարացոյց ապաշխարողաց, Սարգմ. Պետրոս Թիֆլիսեցի, Վենետիկ, 1731:

ԱԿՂ—Արշալամ Կրետացոյ Պատմություն անցիցն, Վաղարշապատ, 1870:

ԱՄԴՀ—Գիրք Ալսերտի որ կոչի Դրախտ հոգւոյ, թարգմ. Մխիթարայ Սեբաստացոյ և Յ. հաննիսի՝ իւրոյ քաղաքացոյ, Վենետիկ, 1729:

ԱՄՀԱ—Համառոտություն աստուածարանութեան Մեծին Ալսերտի, ի լոյս ածեալ Մխիթարայ Սեբաստացոյ, Վենետիկ, 1715:

ԱՄՊՀ—Պատմություն մանաստանին Հադիճոյ, արար Արեւ Մխիթարեանց, Տփլիս, 1856:

BHU—Bousuet Y. B., Discours sur l'hist ire universelle, t. 1, Besançon, 1843:

BPV—Paul et Vergine. par Bernardin de Salt-Pierre, Paris, 1842:

ԲՏՊ—Բոստոնայ հօսք վասն տիեզերական պատմութեան, Վիեննա, 1841:

ԲՔԻ—Միքեա Բժշեկեան, Քերականություն ուսերէն—հայերէն, Վենետիկ, 1828:

ԳԱ, I—Պետրոս Արագոնացի, Գիրք առաքինութեանց, Վենետիկ, 1721:

ԳԱ, II—Պետրոս Արագոնացի, Գիրք առաքինութեանց, Վենետիկ, 1772:

ԳԱԼ—Գալուստ Ամասիացի, Գիրք որ կոչի Լուսաշաիղ, Կ. Պոլիս, 1704:

ԳԱՊԻ—Համառոտ պատմություն ոռւսաց, յօրին. Գարրիել Այվազովսքի, Վենետիկ, 1836:

ԳԵ—Բասիլ Յովնանէս, Դոքողիա, թարգմ. Սարգիս Տիգրանեան, Մոսկվա, 1834:

ԴՄԱ—Գիրք մտածական աղօթից, թարգմ. Պետրոս Թիֆլիսեցի, Կ. Պոլիս, 1701:

ԴՄՏ—Գրիգոր Մարգվանեցի, Տետրակ որ կոչի Պտուղ զբաշանութեան, Կ. Պոլիս, 1733:

ԳՏՊ, II—Տիեզերական պատմություն, աշխատ. Յովսեփայ Դաթրեհան, հ. Բ, Վիեննա, 1852:

ԵՍԱԺ—Արհեստ ճարտասանութեան, աշխատ. Եփրեմ Սեթեան, Վենետիկ, 1832:

ԷՀԱԴ—Առձեռն դիցարանություն, ի էդուարդայ Հիւրմիւղեան, Վենետիկ, 1840:

ԹԱԵ—Թումա Ակովեացի, Խոստովանարան, թարգմ. Պետրոս Մուհուպեան, Վենետիկ, 1727:

ԹԱՊ—Պատմություն Թովմայի Առաքելոյն, Ոտանաւոր շափիւք, Կ. Պոլիս, 1734:

ԹԻԲ—Էմմանուել Թեաւուրս, Իմաստասիրություն բարոյական, թարգմ. Վրթ. Ասկերեան, Վենետիկ, 1793:

ԹԴԵ—Դաշարիկ ծաղկալի, թարգմ. և կազմ. Յովնան Թոխալեցի, Վենետիկ, 1727:

ԻԽ—Խոսակցություն Թէոփիլոսի Յաղագս ճշմարտութեան, Լիվոռնո, 1701:

ԹՃԴ—Ճառ դաստիարակութեան օրիորդաց, դրեաց Մ. Դ. Թադիաղեանց, Կալկաթա, 1847:

ԹՊ—Պատմագիրք հոգւոյ հաւատացեալ, թարգմ. Յովհ. Թոխալեցի, Վենետիկ, 1724:

ԼՌԿ—Լուդովիկեայ Ռասինի ի Կրօնս, թարգմ. Էդ. Հիւրմիւղեան, Վենետիկ, 1872:

ԼՐ—La religion... par Louis Racine, Paris, 1845:

- հԱն, VIII—հաշատուր Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 8, Երևան, 19:
- հԱն, X—հաշատուր Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 10, Երևան, 19:
- հԷՃ—հաշատուր Էդգրավցի, Ճարտասանություն, Վենետիկ, 1713:
- հՋՊՊ—հաշատուր Ջուլյանցույ Պատմություն պարսից, Վաղարշապատ, 1905:
- ԿԿԶ—Կարգադրությունը Հայկական ճեմարանին, Մոսկվա, 1830:
- ԿԴԲ—Կոմիտաս Կոստանդնուպոլսեցի, Ոտանալուք բանք. Կ. Պոլիս, 1704:
- ՁԵՈ. 3091, 6922.—Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 3091, № 6922:
- ՂԶԿ—Ղ. Հոսկինեայ Երզն վասն կրօնից, Թարգմ. Մ. Գարագաշեան, Վիեննա, 1842:
- ՃՀՆՈ—Ճաշակը հին և նոր ողբերգությունաց, Թարգմ. Ա. Բագրատունույ, Վենետիկ, 1869:
- ՄԴԿ—Միլտովկ. Դրախտ կորուսեալ, Թարգմ. Յար. Ալեքերեան, Վենետիկ, 1824:
- ՄԲԵ—Իսկրոնություն Բանկայ Բագրադեանց, Թիֆլիս, 1837:
- ՄԲՃՀ—Ճանապարհորդություն Մեսրոպայ Բաղդևանց ի Հայս, հ. 1, Կալկաթա, 1847:
- ՄՐՊՊ—Պատմություն պարսից, յօրագրէ Մեսրոպայ Բաղդևանց, Կալկաթա, 1846:
- ՄԿԴ—Միլտոնի Կորուստ գրախտին, Թարգմ. Ա. Բագրատունույ, Վենետիկ, 1861:
- ՄԿՊ—Պատմություն Սելվանայ վանուց, Մանուէլ Կիւմլիւշխանցույ, Վաղարշապատ, 1871:
- ՄՄՅ—Յիշատակարան Լազարեան տոհմի, շարագր. ի Մսերայ Մսերեանց, Մոսկվա, 1856:
- ՄՋՊՀ, 111—Միքայէլ Զամչեանց, Պատմություն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786:
- ՄՊԿ—Պաւսանիան կաթողիկոսաց էջմիածնի, գր. ի Մսերայ Մսերեանց, Մոսկվա, 1876:
- ՄՈԼ—Լուսնուր բանից Ալպերտին, շարագր. ի Մ. Սևրաստացույ, Վենետիկ, 1715:
- ՄՍՀՀ—Հրահանգ Հարտասանության, յօրին. Միքայէլ Սալանթիան, Մոսկվա, 1836:
- ՅԱ—Թովմաս Վանանդեցի. Յոզնադիմի իրողությունաց սահմանք, Ամստերդամ, 1704:
- ՅԱՀ—Յարութիւն Ալամարեանց Զափարեականք, Ս. Պետրոքոս, 1884:
- ՅԼՅ—Յիշատակարան Յովհաննու Յովակիմեան Լազարեանց, Մոսկվա, 1859:
- ԶԿԵԶ—Յովհաննէս Կարմիրտոկան, Խմբ. զգրքան, Թարգմ. Պետրոս Մուսուկեան, Վենետիկ, 1737:
- ՅՊՆՀ—Պատմություն Նոր Զուգայի, աշխատ. ի Յարութիւնէ Տէր Յովհաննէանց. հ. 1, Նոր Զուգայ, 1830:
- ՅՊՍ—Յովհաննէս Պոնա, Սկզբունք և ուսուցմունք, Վենետիկ, 1744:
- ՆԳԶ—Նկարաբեր գաղթականություն հայոց ի Պարսկաստանէ ի Ռուսաստան, Մոսկվա, 1832:
- ՆԶՄ—Միքայէլ Նալբանդեան, Յաղագս Հայկական մատենադրութեան ձեռ.—Նույնը, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 19:
- ՆՊՎ—Նան Պիւռայ Գաղղիացույ Նաւարկություն կամ Պալոս և Վերգինիա, Թարգմ. Թ. Խ. Աւետումեան, Կալկաթա, 1830:
- ՇՀՆ—Շակոբ Շամախեցի. Գիրք աղօթից, Կ. Պոլիս, 1760:
- ՈՓ—Շահամիր Շահամիրեան, Որոգայթ փառաց, Մադրաս, 1773:
- ՊՊՎ—Պօղ և Վերգինէ, վիպաս. Պէռնարտենի տը Ալէն-Փիէր, Թարգմ. Ամր. Գալֆեան, Փարիզ, 1856:
- ՊՋԲ—Պետրոս Զուգայեցի, Բժշկարան համառօտ, Նախիշեան, 1793:
- ՊՍԿԱ—Պօղոս Սեներեան, Կրթութիւն ապաշխարողի, Վենետիկ, 1751:
- ՊՎԱ—Տեառն Պոսիւէ արքեպիսկոպոսի Խօսք ի վէպս ազգաց, հհ. Ա—Բ, Վենետիկ, 1841:
- ՋԴՅ—Ղազար Զանկեցի. Գիրք որ կոչի Դրախտ ցանկալի, Կ. Պոլիս, 1785:
- RA—Chefs-d'œuvre de Y. Racine; Esther—Athalie, Paris, 1887:
- ՌԳ, 1—Գոթողիա, ողբերգ. Յ. Ռասինի, Թարգմ. Գ. Հիւրմիւղ, Վենետիկ, 1864:
- ՌԳ, 11—Ռասինի Գոթողիա.—Տե՛ս ՃՀՆՈ, էջ 193—271:
- ՍԱՊ—Պատմութիւն կենաց և վարուց Միխիթարայ Սեւրաստացույ, յօրին. Ստեփանոսի Ազոնց, Վենետիկ, 1810:
- ՍՐՈ—Բնական օրէնք, աշխատ. ի Եփրեմայ Սէթեան], Վենետիկ, 1851:
- ՍԳԺ—Սկիզբն գրոցս որ կոչի ժողովածու, Կ. Պոլիս, 1710:
- ՍԳՐՎ—Գիրք քրիստոնէականի վարդապետութեան, շարագր. Մ. Սեւրաստացույ, Վենետիկ, 1725:
- ՍԵԶ—Սիմէոն Երևանցի. Գիրք որ կոչի Զրօսարան հոգեւոր, էջմիածին, 1772:
- ՍՄԳԺ—Միխիթար Սեւրաստացի, Սեկնություն Գրոցն ժողովողին, Վենետիկ, 1736:
- ՎԲԻ—Բնարանութիւն իմաստասիրական, յօրին. ի Գ. Մ. և ի Ղ. Վանանդեան գպրաց, Ամստերդամ, 1702:
- ՎՊՎ—Վէպք ի Պօղ և ի Վերգինիա, Թարգմ. էդ. Հիւրմիւղեան, Վենետիկ, 1860:

ՐՈՒՆ—Ղուկաս Օղոլլուղեան, *Ուսումնականութիւն նաւադղութեան*, Վենետիկ, 1809.

FAT—Les aventures de Te'e'maque par Fe'ne'lon, Paris, 1899:

ՖԱՏ, I—Ֆենեկոնի Արկածը Տելեմաքայ, Բարգմ. Մ. Զախարսեան, Վենետիկ, 1826.

ՖԱՏ, II—Արկածը Տելեմաքայ... Ֆենեկոնի, Բարգմ. իմ. Հրոմմուսեան, Վենետիկ, 1850.

ՖԳԹ—Պատմութիւն Թււլամարի... Յրանչարօ Ֆենեկօ, Բարգմ. Մ. Խոճենց, Նախիչևան, 1793:

МОРФОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА XVIII—XIX ВЕКОВ

В. Г. АМБАРЦУМЯН

Резюме

Одно из интереснейших явлений в истории армянского языка—функционализация в XVIII—XIX вв. древнеармянского в качестве письменно-литературного варианта общелитературного языка. Древнеармянский язык в XVIII—XIX вв. подвергается значительным изменениям, часть которых относится к морфологической структуре языка (выражение грамматических категорий существительного, прилагательного, местоимения и глагола). При этом важны такие обстоятельства как следование литературному армянскому языку, многовековое соприкосновение грабара со среднеармянским, воздействие новоармянского литературного языка. Они частично обусловлены латинизацией. Поэтому грабар в XVIII—XIX вв. своими морфологическими особенностями значительно отличается от грабара предыдущих периодов и, особенно, от древнеармянского литературного языка.